# ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԻԼԻ 23-ԻՑ ՄԱՅԻՍԻ 8-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ

**Նախաբան**

Սույն զեկույցը նպատակ ունի ներկայացնել 2018թ. ապրիլի 23-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում Հանրային, «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերությունների կողմից Հայաստանի ներքաղաքական իրադարձությունների լուսաբանման մշտադիտարկման տվյալները։ Ավելին՝ այն նպատակ ունի համեմատել վերոնշյալ ժամանակահատվածում այս հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումների առանձնահատկությունները «Իրազեկ քաղաքացիների միավորման» կողմից ապրիլի 11-ին հրապարակված՝ «Հեռուստաընկերությունների կողմից Սերժ Սարգսյանի և նրա՝ վարչապետ դառնալու դեմ նախաձեռնությունների լուսաբանումը» զեկույցում ներկայացված իրավիճակի հետ։

Զեկույցը պատրաստելիս «Իրազեկ քաղաքացիների միավորումը» ապրիլի 23-ից մայիսի 8-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկել «Արմենիա», «Շանթ» և Հանրային հեռուստաընկերությունների՝ երեկոյան ժամը 18:00-24:00-ի (այսուհետ՝ փրայմ-թայմ՝ անգլ. prime-time տերմինից) ընթացքում թողարկվող լրատվական և ոչ լրատվական հաղորդումները։ Մշտադիտարկման համար ընտրվել են այս երեք հեռուստաընկերությունները՝ որպես համապետական սփռում և հեռուստադիտողների շրջանում առավել մեծ հանրաճանաչություն ունեցող լրատվամիջոցներ։

**Հանրային հեռուստաընկերություն**

Ապրիլի 23-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում, մշտադիտարկելով Հանրային հեռուստաընկերության «Օրակարգ» լրատվականի փրայմ թայմում հեռարձակվող թողարկումները, «Իրազեկ քաղաքացիների միավորման» մշտադիտարկման թիմը ուսումնասիրել է՝ ինչպես է հեռուստաընկերությունը լուսաբանում հանրապետության ներսում քաղաքական զարգացումները վարչապետ Սերժ Սարգսյանի պաշտոնաթողությունից հետո։

Լուսաբանելով Սերժ Սարգսյանի հրաժարականը՝ լրատվականը ներկայացրել է մեջբերումներ, որոնք դրական են գնահատում պաշտոնաթող վարչապետի նման որոշումը։ Ապրիլի 24-ի թողարկմանը ներկայացվել է մեջբերում ռուսական մամուլից, ըստ որի Սարգսյանն իշխանությունից հեռացել է արյունահեղություն չցանկանալու պատճառով։ Մեջբերվել է Եվրախորհրդում Հայաստանի հարցով համազեկուցողների

հայտարարության այն մասը, որտեղ Սարգսյանի արարքը որակվում է որպես «խիզախ քայլ»:

Ուշագրավ է հանգամանքը, որ միայն Ս.Սարգսյանի հրաժարականից հետո՝ ապրիլի 24-ին, լրատվականը, լուսաբանելով «Իմ քայլը» շարժումն, առաջին անգամ Հանրապետության հրապարակում իրականացվող հանրահավաքների մասին պատմելիս օգտագործել է երկնքից դրոնով արված կադրեր, որոնք ցույց են տալիս հավաքի մասնակիցների ամբողջական քանակը:

Հանրապետության վարչապետի՝ մայիսի 1-ին կայանալիք ընտրություններին նախորդած շաբաթվա ընթացքում լրատվականը ներկայացրել է այդ օրերին հրապարակված պետական գերատեսչությունների բոլոր մամուլի հաղորդագրությունները: Պաշտպանության նախարարության հրապարակած հաղորդագրությունների միջոցով ներկայացվել է իրավիճակի լարումը սահմանին: Ապրիլի 26-ի թողարկմանը լրատվականը առանձին հարցրազրույց է ներկայացրել ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի հետ ղարաբաղա-ադրբեջանական սահմանին սպառազինության կուտակումների վերաբերյալ:

Նույն թողարկման մեջ լրատվականը ներկայացրել է «Ինչպե՞ս փրկել ճշմարտությունը» վերնագրով ռեպորտաժ, որում հերքում է լուրերը, թե Հանրային հեռուստաընկերությունը չի լուսաբանում «Իմ քայլը» շարժումը: Տեսանյութում ներկայացվել է շարժման օրերին համացանցում տարածվող ապատեղեկատվությունների մի քանի օրինակ: Լուսաբանելով նախագահ Արմեն Սարգսյանի «Ազատություն» ռադիոկայանին տված հարցրազրույցը՝ «Օրակարգն» ընտրել է դրա այն հատվածը, որտեղ նախագահը կոչ է անում երկիրը վերադարձնել բնականոն հունի:

Մշտադիտարկման համար ընտրված ժամանակահատվածում իր թողարկումների ընթացքում «Առաջին ալիքի» լրատվականի թողարկումների եթերաժամանակի զգալի մասը հատկացվել է պաշտոնական հաղորդագրությունների ընթերցմանը: Սակայն որոշ դեպքերում լրատվականը չի սահմանափակվել միայն պաշտոնական հայտարարությունների հրապարակմամբ և հեռուստաընկերության լրագրողների միջոցով դրանց ճշմարտացիությունն ապացուցող ռեպորտաժ է ներկայացրել: Ապրիլի 27-ի հիմնական թողարկմանը «Օրակարգը» ներկայացրել է Պետական եկամուտների կոմիտեի հրապարակած գնահատականը, համաձայն որի երկրում «վերջին շաբաթներին տնտեսությունը պասիվացել է»: Մինչ պաշտոնական վիճակագրությունը ներկայացնելը լրատվականը ռեպորտաժում ցուցադրել է մի կնոջ, ով բողոքում է վաճառքի ծավալի անկումից՝ պայմանավորելով նշված հանգամանքն այդ օրերին կազմակերպվող դասադուլներով:

Մայիսի 1-ին կայացած ընտրությունները Հանրային հեռուստաընկերությունն ամբողջությամբ հեռարձակել է իր ուղիղ եթերում: «Օրակարգի» հիմնական թողարկմանն, ամփոփելով ընտրությունները, վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանին ուղղված հարց ու պատասխաններից հետո լրատվականը ներկայացրել է ԱԺ-ում տեղի ունեցած մտքերի փոխանակման փուլը: Մոտ 7,5 րոպե տևողությամբ «Նիկոլ Փաշինյան. Ելք, թե՞ «ոչ համոզիչ»» վերնագրով ռեպորտաժում ներկայացված են Հանրապետական կուսակցության պատգամավորների փաստարկները Նիկոլ Փաշինայանի վարչապետության վերաբերյալ՝ կապված մասնավորապես երկիրն անկայունության հասցնելու և Հայաստանի կործանման հավանականության հետ, ինչպես նաև շեշտադրումներ այն մասին, որ գործող իշխանությունը գիտակցել է իր սխալը: Ներկայացվել են ելույթների այն հատվածները, որտեղ շեշտվում է, որ թեև վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը նշանավորվել է իր սկսած շարժմամբ, սակայն նրան հնարավոր չէ վստահել պետության գլխավոր պաշտոնը: Այդ պահին Հանրապետության հրապարակում տիրող տրամադրության և իրականացվող հանրահավաքի մասին լրատվականը պատմել է 15 վայրկյան տևողությամբ մեկ լուրով՝ չլուսաբանելով ընտրությունների ավարտից հետո Հանրապետության հրապարակում կայացած հանրահավաքը: Մեկ շաբաթ անց՝ մայիսի 8-ին, Փաշինյանի վարչապետ ընտրվելուց հետո, լրատվականն առանձին ռեպորտաժով պատմել է Հանրապետության հրապարակում քվեարկության արդյունքներին սպասող մարդկանց և «հրապարակի տրամադրության» մասին: Ներկայացվել են կադրեր, որտեղ մարդիկ տոնախմբություններ են իրականացնում, ներկայացվել են Փաշինյանին գովաբանող մեջբերումներ:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» պրոպագանդայի մոնիթորինգի թիմը նկատել է, որ մայիսի 2-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում Հանրային հեռուստաընկերության «Օրակարգը», ներքաղաքական իրադարձությունները լուսաբանելիս, նախորդ օրերի համեմատ փորձել է համեմատաբար ավելի օբյեկտիվ լուսաբանում ներկայացնել:

Հարկ է նշել նաև, որ Հանրային հեռուստաընկերությունը ապրիլի 15-ից եթեր չի հեռարձակել իր կիրակնօրյա վերլուծական «360 աստիճան» հաղորդումը, դրա փոխարեն կիրակի օրերին եթեր է հեռարձակվել «Օրակարգ» լրատվականը:

**«Արմենիա» հեռուստաընկերություն**

Ապրիլի 23-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում, մշտադիտարկելով «Արմենիա» հեռուստաընկերության կողմից Հայաստանի ներքաղաքական

իրադարձությունների լուսաբանումը, կարող ենք փաստել, որ մինչև մայիսի 8-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից Նիկոլ Փաշինյանի վարչապետի պաշտոնում ընտրվելն այս հեռուստաընկերությունը փորձել է կարևորություն չտալ նրա գլխավորած շարժմանը՝ չներկայացնելով դրա իրական ծավալները: Էական նշանակություն չտալով «Իմ քայլը» նախաձեռնությանը՝ հեռուստաընկերությունը Երևանում և մարզերում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելիս հիմնականում ներկայացրել է տարբեր պաշտոնական գերատեսչություններից դրանց վերաբերյալ հրապարակվող արձագանքները, ոչ թե բուն իրադարձությունը:

Մայիսի 2-ին, երբ մայրաքաղաք Երևանում կաթվածահար էր երթևեկությունը և քաղաքի տարբեր հատվածներում երթեր, դասադուլներ և գործադուլներ էին տեղի ունենում, «Ժամը» լրատվականի հիմնական թողարկման առաջին 19 րոպեներին ներկայացվել են պաշտոնական արձագանքներ տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ, որոնք հիմնականում իրենց բնույթով սաստող կամ քննադատող էին՝ առանց պարզաբանելու, թե ինչ է կատարվում հանրապետությունում: Միայն հաղորդման 19-րդ րոպեին լրատվականը 30 վայրկյան տևողությամբ պատմել է Հանրապետության հրապարակում տեղի ունեցող հավաքի մասին և 1,45 րոպե տևողությամբ ռեպորտաժով ամփոփել երևանյան անցուդարձը:

Դրա նախօրեին՝ լուսաբանելով մայիսի 1-ին ԱԺ-ում կայացած վարչապետի ընտրությունները, որոնց ընթացքում չհաջողվեց երկրի վարչապետ ընտրել, հեռուտաընկերությունը, ներկայացնելով մոտ 8 ժամ տևողությամբ լսումները, մեջբերել է Հանրապետական կուսակցության պատգամավորների այն ելույթները, որոնք վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանին վարկաբեկելու միտում ունեին: Մասնավորապես, երկու անգամ շեշտվել է, որ Փաշինյանի վարչապետ դառնալով, խորհրդարանը կկորցնի լավ ընդդիմություն, սակայն ձեռք չի բերի լավ վարչապետ, և որ Փաշինյանը զիջում է նախկինում երկրի գլխավոր պաշտոնը զբաղեցնելու համար պայքարած ընդդիմադիր քաղաքական գործիչներին: Ներկայացվել են ԱԺ պատգամավոր Կորյուն Նահապետյանի հարցերը Փաշինյանին, որոնք փորձ էին անում տպավորություն ստեղծել, որ վարչապետի թեկնածուն ի վիճակի չէ պատերազմական պայմաններում տիրապետել իրավիճակին: Նույն թողարկման մեջ հեռուստաընկերությունը ներկայացրել է ՀՀ Պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրությունը և տեսանյութը՝ Լեռնային Ղարաբաղի հետ ադրբեջանական սահմանին սպառազինության շարժի և կուտակման մասին: Ներկայացվել է նաև ԱԱԾ տարածած հաղորագրությունը Հայաստանում ահաբեկչական գործողությունների կանխարգելման մասին: Լրատվականի ապրիլի 23-ի հիմնական թողարկման մեջ ևս ներկայացվել է այդ պահին Պաշտպանության

նախարարի պաշտոնակատար Վիգեն Սարգսյանի հայտարարության այն հատվածը, համաձայն որի սահմանին առկա լարման պատճառը երկրի ներսում ստեղծված իրավիճակն է: Ներկայացվել է Վիգեն Սարգսյանի հանդիպումը վերականգնողական կենտրոնում բուժվող նախկին զինծառայողների հետ, որի ընթացքում պաշտպանության նախարարի պաշտոնակատարը պատմում է վերջին շաբաթում սահմանային իրավիճակի լարման, Ադրբեջանի կողմից զինտեխնիկայի կուտակման և սահմանին հավանական սրացումների մասին:

«Ժամը» լրատվական թողարկումը կառուցվածքային առումով բաղկացած է առանձին հատվածներից, որտեղ առանձին բաժնով ներկայացվում են նաև տնտեսական նորությունները: Փոխանցելով պաշտոնական մի շարք հաղորդագրություններ՝ հեռուստաընկերությունը ներկայացրել է ՊԵԿ-ի հայտարարությունը, համաձայն որի երկրի ներքաղաքական վիճակը բացասաբար է ազդում երկրի տնտեսական իրավիճակի վրա: Ներկայացվել է ռեպորտաժ այն մասին, որ գործող կառավարությունը սատարում է արտահանող ընկերություններին: Լրատվականում ներկայացվում են նախորդ ամսվա համեմատ զբոսաշրջության անկման հետևանքները: Ներկայացվում է ՊԵԿ-ի մեկ այլ մեկնաբանություն, ըստ որի Հայաստանում կրճատվել է արտասահմանյան գնումների աճը:

ԻՔՄ մշտադիտարկման թիմը նկատել է նաև, որ մինչ երկրի վարչապետի պաշտոնում ընտրվելը Փաշինյանի և հանրապետության վարչապետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Կարապետյանի բանակցությունների անհաջող փորձը լուսաբանելիս, հեռուստաընկերությունը կողմնակալ կերպով է լուսաբանել զարգացումները՝ ի օգուտ Կ.Կարապետյանի: «Ժամը» լրատվականի ապրիլի 25-ի թողարկման ընթացքում զգալի առավելություն է տրվել Կ.Կարապետյանի տեսակետների լուսաբանմանը, վարչապետի տեղակալի պաշտոնակատարից արվող մեջբերումները զգալիորեն գերակշռել են: Նկատենք, որ նույն թողարկման մեջ լրատվականը օբյեկտիվորեն լուսաբանել է Էրեբունիում դիմակավոր անձանց հարձակումը ցուցարարների վրա: Ապրիլի 25-ի Փաշինյան-Կարապետյան չկայացած բանակցություններից հետո, հեռուստաընկերությունը ներկայացրել է Կարապետյանի տեսակետը՝ հիմնական շեշտադրումը դնելով բանակցային պայմանների բացակայության վրա: Ներկայացվող պաշտոնական հաղորդագրությունները պատմում են առաջարկված բանակցային պայմանների անհնարինության մասին: Լրատվականը ընտրել և ներկայացրել է Կարապետյանի՝ «Շանթ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցի բանակցությունների վերաբերյալ հատվածը, որտեղ Կարապետյանն իրեն ներկայացնում է որպես պրոֆեսիոնալ բանակցող, ինչպես նաև հարցազրույցի այն հատվածը, որտեղ

վարչապետի պաշտոնակատարն ընդունում է իր քաղաքական ուժի մեղավորությունը և հարցի լուծումը տեսնում միայն երկխոսության մեջ:

Հեռուստաընկերության լրատվականը այս ընթացքում, ինչպես նաև դրան նախորդած ժամանակատվածում, ամեն կերպ բացառել է հանրապետության նախկին նախագահ, այնուհետև վարչապետի պաշտոնը ստանձնած Սերժ Սարգսյանի վերաբերյալ քննադատությունը: Ուշագրավ է, որ Ս.Սարգսյանի մասին որևէ բացասական կարծիք չներկայացնելը հասել է այն աստիճանի, որ լրատվականի ապրիլի 28-ի թողարկմանը եթեր հեռարձակված մի ռեպորտաժում, որը պատմում էր Նիկոլ Փաշինյանի դեպի Վանաձոր ավտոերթի մասին, մոնտաժվել է փողոցում նկարահանման պահին հնչող «Քայլ արա, մերժի՛ր Սերժին» բառերով մի երգի բոլոր այն հատվածները, որտեղ հնչում է վերոնշյալ նախադասությունը՝ թողնելով միայն դրա երաժշտությունը: Ավելին՝ հեռուստաընկերությունն անգամ Սարգսյանի պաշտոնաթող լինելուց հետո փորձեր է արել հիշատակել և ընդգծել նախկին նախագահի ունեցած դերն, օրինակ՝ Ղարաբաղյան պատերազմում: Մայիսյան եռատոնին նվիրված թողարկման մեջ հեռարձակված մի ռեպորտաժում առանձնահատուկ հիշատակվում է, որ Ղարաբաղի պաշտպանության կոմիտեն Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ «կարողացել է երկու ամսում անել այն, ինչն անիրական էր թվում»:

Արդեն Փաշինյանի վարչապետ ընտրվելուց հետո լրատվականի լուսաբանման մեջ որոշակի փոփոխություն է նկատվում: Մայիսի 8-ի թողարկման մեջ, լուսաբանելով Հանրապետության հրապարակում տոնախմբությունը, վերջապես ներկայացրել է դրա իրական ծավալը: Հեռուստաընկերությունը, որը մինչև այդ չէր պատմում ցույցերի մասնակիցների իրական ծավալների մասին, պատմում է, որ այդ օրը «Հանրապետության հրապարակում ասեղ գցելու տեղ չկար»:

Մեկ այլ հատկանշական հանգամանք էլ այն է, որ Սերժ Սարգսյանի ընտրությանը հաջորդած հրաժարականին զուգընթաց «Արմենիա» հեռուստաընկերությունը եթերից հանել է իր կիրակնօրյա «Պոստ ֆակտում» վերլուծական-ամփոփիչ ծրագիրը: Դրա վերջին թողարկումը եղել է ապրիլի 15-ին:

### «Շանթ» հեռուստաընկերություն

Մշտադիտարկված հեռուստատեսություններից ամենաանկողմնակալ լուսաբանումը կատարել է «Շանթ» հեռուստաընկերությունը: Մշտադիտարկման ողջ ընթացքում «Շանթ» հեռուստաընկերության լուսաբանումը միաժամանակ և չեզոք է, և բազմակողմանի: Այսպես, օրինակ՝ ապրիլի 23-ին «Հորիզոն» լրատվականի 18:00-ի

թողարկումը ներկայացնում է Սերժ Սարգսյանի հրաժարականի տեքստը, ապա Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը: «Հորիզոնը» այս թողարկման ընթացքում ցույց է տվել Ապրիլյան պատերազմի մասնակից զորացրված զինվորների՝ Ազգային ժողովի պատգամավորների հետ բանակցելու պահանջը, որը ներկայացվել էր ԱԺ-ն հսկող ոստիկաններին, Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի ուղերձը Հայաստանի ժողովրդին:

Նույն ապրիլի 23-ի «Հորիզոնի» հիմնական՝ 22:00-ի թողարկումը ներկայացնում է «Ազատություն» ռադիոկայանի կողմից նկարահանված ռեպորտաժը այն մասին, թե ինչպես է նախկին ՀՀԿ-ական պատգամավոր Առաքել Մովսիսյանը Էջմիածնում՝ Փարաքարի հատվածում, մի խումբ քաղաքացիների հրահանգներ տալիս, որ փակեն Երևան եկող ճանապարհը: Ապրիլի 23-ի «Շանթ» հեռուստաընկերության փրայմ թայմի հիմնական մասը՝ մոտ 4 ժամ, նվիրված է եղել շարժման լուսաբանմանը, որի ընթացքում ներկայացվել են Հանրապետության հրապարակում տեղի ունեցող հանրահավաքից ուղիղ եթերի դրվագներ և շարժման մասնակիցների ամբողջական ճառեր:

Ապրիլի 29-ի 22:00-ի «Հորիզոնի» թողարկումը ևս բավականին չեզոք է լուսաբանում երկրում ընթացող քաղաքական զարգացումները: Այսպես, օրինակ՝ այս թողարկման ընթացքում մանրամասն ներկայացված է ուսանողական ակցիան, այդ թվում՝ դրա շրջանակներում հնչած բուհերն ապակուսակցականացնելու կոչերը: Ապրիլի 29-ի 22:00-ի «Հորիզոնի» մոտ 24 րոպեանոց թողարկման առաջին 19 րոպեները նվիրված են եղել շարժմանը: Թողարկման մեջ տեղ է գտել նաև Արմեն Սարգսյանի հարցազրույցը BBC-ին և Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցը НТВ-ին, երկուսն էլ չեզոք տոնայնությամբ՝ հարցազրույցների ուղղակի մեջբերմամբ:

Մայիսի 1-ի «Հորիզոն» լրատվականի 22:00-ի թողարկումը անկողմնակալ լուսաբանման ևս մեկ օրինակ է, որը օբյեկտիվ կերպով ներկայացնում է օրվա քաղաքական անցուդարձը՝ ցուցադրելով դրվագներ Հանրապետության հրապարակից կատարված ուղիղ հեռարձակումներից:

Մայիսի 7-ի «Հորիզոն» լրատվականի 22:00-ի թողարկումը ներկայացնում է մայիսի 8-ին կայանալիք վարչապետի ընտրության վերաբերյալ ԱԺ տարբեր խմբակցությունների տեսակետները: Բոլոր կուսակցությունների տեսակետները ներկայացված են համաչափ և անկողմնակալ ձևով:

«Շանթ» հեռուստաընկերությունը կատարել է չափավոր լուսաբանում՝ հստակ ներկայացնելով մշտադիտարկված ժամանակահատվածում Հայաստանում տեղի ունեցող անցուդարձը՝ օբյեկտիվ լրատվության կանոններին համապատասխան: Միաժամանակ, «Շանթ» հեռուստաընկերությունը չի դիմել տնտեսական ճգնաժամի

սպառնալիքների և արցախյան սահմանագծին հնարավոր բախումների մասին ենթադրությունների լուսաբանմամբ: «Շանթ» հեռուստաընկերության վերլուծական հաղորդումը՝ «Հեռանկարը», որը եթեր է հեռարձակվում «Հորիզոն» լրատվականների շրջանակում, շարունակել է կանոնավոր եթեր հեռարձակվել:

## Եզրակացություններ

Մշտադիտարկված երեք հեռուստաընկերություններից ամենաօբյեկտիվ լուսաբանումը ապահովել է «Շանթ» հեռուստաընկերությունը: Հանրային հեռուստաընկերությունը մայիսի 2-ից հետո նս փորձել է առավել օբյեկտիվ լրատվություն տրամադրել, մինչդեռ «Արմենիա» հեռուստաընկերությունը շարունակել է անտեսել երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասշտաբները անգամ մայիսի 8-ին:

Մյուս կողմից՝ Հանրային և «Արմենիա» հեռուստաընկերությունները, ի տարբերություն «Շանթի», փորձել են դրական երանգ հաղորդել Սերժ Սարգսյանի հրաժարականին: Այս երկու հեռուստաընկերությունները անգամ դադարել են եթեր հեռարձակել վերլուծական հաղորդումներ: «Արմենիա» հեռուստաընկերությունը եթեր չի հեռարձակել «Պոստ ֆակտում» հաղորդումը, իսկ Հանրայինը՝ կիրակնօրյա «360 աստիճան» հաղորդումը: Երկու հաղորդումների դեպքում էլ վերջին թողարկումը եղել է ապրիլի 15-ին:

«Շանթ» հետուստաընկերությունը մշտադիտարկված ժամանակատվածի ողջ ընթացքում ներկայացրել է օբյեկտիվ և անկողմնակալ լրատվություն՝ եթեր հեռարձակելով թե պաշտոնական տեսակետը և թե լայնամասշտաբ ցույցերն ու դրանց ղեկավարների կողմից ներկայացվող պահանջներն ու պնդումները: Հանրային հեռուստաընկերությունը մշտադիտարկման սկզբում ավելի շատ ներկայացրել է պաշտոնական տեսակետը, սակայն մայիսի 2-ից 8-ն ընկած ժամանակահատվածում գրանցել է լուսաբանման ոճի փոփոխություն՝ փորձ կատարելով ներկայացնել ավելի օբյեկտիվ լրատվություն: Մշտադիտարկման ժամանակահատվածի ավարտին «Արմենիա» հեռուստաընկերության լրատվությանը դեռևս հնարավոր չէ համարել օբյեկտիվ:

Ուշագրավ է նաև, որ «Արմենիա» և Հանրային հեռուստաընկերությունները ցուցադրել են ռեպորտաժներ, որոնք ներկայացրել են տնտեսական հնարավոր ճգնաժամի մասին տեսակետներ:

Ավելին՝ Հանրային հեռուստաընկերությունը մինչև մայիսի 8-ը հնարավորություն չի ընձեռել հասարակության՝ ի դեմս շարժման մասնակից ցուցարարների, ներկայացնել իրենց կարծիքը, պահանջը և փողոցային պայքարի դուրս գալու դրդապատճառները, մինչդեռ հեռուստաընկերության լրատվության մեջ գերակշիռ տեղ է հատկացվել պաշտոնական հայտարարություններին: Արդեն մայիսի 8-ին՝ Նիկոլ Փաշինյանի որպես վարչապետ ընտրվելուց հետո, «Օրակարգը» ուղղակի խոսքով ներկայացրել է Հանրապետության հրապարակում հավաքված մարդկանց սպասումները և պահանջները նոր կառավարությունից, ինչպես նաև Փաշինյանի հասցեին հնչեցրած նրանց դրական գնահատականները:

Մշտադիտարկման ժամանակահատվածում Հանրային հեռուստաընկերության դեպքում արձանագրված լուսաբանման քաղաքականության փոփոխությունը վկայում է, որ այս հեռուստաընկերությունը տարբեր ներքաղաքական իրավիճակներում որդեգրում է իրավիճակին ադապտացվելու քաղաքականություն, այլ ոչ թե ունի հստակ և հետևողական լրատվական քաղաքականություն: Հանրային հեռուստաընկերությունը չունի օբյեկտիվ լրատվություն ապահովող լրատվական քաղաքականություն և քաղաքական իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված փոխում է նաև իր մոտեցումները: